

**ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ԳՈՐ-  
ԾՈՒՆԿՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ**

Լոնդոնում՝ Վիկտորիա փողոցի վրայ կանգնած է մի հըս-  
կայական շինութիւն. «Փրկութեան բանակի միջազգային դլսա-  
ւոր շէնքը» մակագրութեամբ։ Մարդ զարմանալով է անցնում  
պաշտօնեաների սենեակների անվերջ շարքի միջով, որտեղից  
կտռավարում է Փրկութեան բանակը։

Հեռուն գուրսը, քաղաքի ով և է արու արձանի փողոցի  
անկիւնում, յաճախ դարեջրատների գիմաց, պատահում էք  
Փրկութեան բանակի զինուորների տարազով մարդկանց, որոնք  
կանգնած մի արկղի վրայ, ճառում են։ Ճառողի արտասանու-  
թիւնը ցոյց է տալիս, որ բանուոր դասակարդից է։ Նրա մօտ  
կանգնած են մի քանի այր և կին զինուորներ, որոնք իրենց  
երգանման աղաղակով, որին ձայնակցում են և երաժշտական  
դործիքներ, ճառախօսին հանգստանալու միջոց են տալիս։ Ժո-  
ղովուրդը հաւաքում է այդ խմբի շուրջը, նորակոչ զինուոր-  
ներ են հաւաքում բանակի համար, որ հոգիներին գէպի փրկու-  
թիւնն է առաջնորդում։

Քաղաքի ոք և է մասում, գեշեր ժամանակ, մէկ էլ տեսար  
երկու հոգի են նկատուում, որոնք մի ցանցածև պատգարակի  
վրայ մի ժանր մարմին են տանում։ Դոքա դարձեալ Փրկութեան  
բանակի զինուորներ են, որոնք արբեցողների փրկող վաշտին  
են պատկանում։ Նոցա դործն է որոնել արբեցողներին և տա-  
նել Փրկութեան բանակի՝ արբեցողների համար շինուած ապաս-  
տարանը։ Փրկութեան բանակը երկու այդպիսի բաւականին  
մէծ հաստատութիւն ունի, մէկը տղամարդկանց, իսկ միւսը  
կանանց համար։

Փրկութեան բանակը իւր ընկերական դործունէաւթեան  
մէջն է։ Նա կեղտոտութեան մէջ որոնում է ամենաթշուառ  
մարդկանց, բանակի դռների մօտ՝ արձակուող յանցաւ որներին,  
փողոցում անառակ կանանց խիզճն է զարթեցնում, երբ նոքա  
իրենց որսի արշաւանքն են ուսեւ, պատապարում է անտուն և  
անտէր մարդկանց, քաղցածներին կերակրում է։

Մի անգամ Լոնդոնի արևելեան մասում մի երկար և նեղ  
փողոց տեսայ լիքը լեցուած մարդկանցով. շատերի շորերը  
վկայում՝ էին նոցա նախկին շքեղութեան մասին։ գէմքերից  
երեսում էր, որ այնաեղ ամեն տեսակի և ամեն հասակի մար-  
դիկ են հաւաքուել։ Բոլորի գէմքին անհանգստաւթիւն և համ-

բերութիւն էր նկատում, բայց և այնպէս այնտեղ տիրում էր օրբնակելի կարգ ու խաղաղութիւն։ Փռզոցի վերջում գտնուում էր Փրկութեան բանակի շինութիւններից մէկը, ուր ամեն մի մարդ երկու պենսով ընդաւնելութիւն էր գտնում, քանի գետ տեղ կար։ Խոկ նորա, որոնք այդ բաղդին չէին արժանանում, հեռանում էին կամ թէ նստում էին փողոցում շինութեան գրան առջև այն յուսով՝ թերեւ էլի ներս կընդունուեն նման տեսարաններ տեղի էին ունենում անտուն, անցարկ կանանց համար յատկացած հաստատութիւնների առաջ։ Ներոք՝ մարդ գիկ սրառիում են ուղղանկիւն արկղների մէջ, որ մօտ երկու մետր երկարութիւն և մի մետր լայնութիւն ունի և 20—30 սանտիմետր բարձրութիւն գետնից այդ արկղների մէջ՝ յատակին ձգուած է մի բարակ կաշեաց ներքնոց, մի կաշեաց բարձ և մի բամբակէ վերմակ։

Այդ աեղելում կանոնաւոր իերապով բաշխուում է և կերակուր Սովետները երկար շարքով անցնում են կերակուր բաժանելու տեղի մօտայիս սրանդից ստանում են ամսնով մի լիոր սուս և մի կասր հաց ու այդ բարին վճարում են մի պենի։ Ունեոքները կարող են մի կամ երկու աւելի վճարուած պենիներով միս և կանաչի սաանալ։ Կերակուր և խմիչք բաժանելու համար կան և առանձին տեղեր՝ բաժանուած այդպիսի սպասուուներից և մեծ հաստատութիւններից։ Ոգելից խմիչքը արգելուած է. մի բաժակ թէյ, մի փոքր հաց և կարագի հետ արժէ կէո պենի։ Աերակարները ընդհանրապէս համեղ են լինում։ 1904 թուին Փրկութեան բանակի տուած տեղեկութեան համաձայն՝ միացեալ թագավորութեան մէջ (Ո՞նդիայում) 34/2 միլ. այդպիսի ճաշ է բաժանուել։ Այդպիսի հիմնարկութիւնների արժեքը գնահատելու համար, պէսք է տեսնել, թէ այդ մարդիկ լնչափուի ագահութեամբ են կերակուրը կուլ տալիս։ 1901 թուին հիւրերը կերակրի, խմիչքի և գիշերելու աւելի համար 40,000 ֆունտ ստերլինգ կուլ 800,000 (մօտ 400,000 մանա) մարկ են վճարել։ Այս գումարը՝ ամբողջ ծախտի 1/3 մասը հազիւ է կազմում, մնացածը կազմուում է ազատ նուիրաբերութեամբ։

Բացի այս մեծ ապաստարաններից՝ Փրկութեան բանակը իւր իշխանութեան տակը ունի և այնպիսի շինութիւններ, որ ուղիղ ընկերութիւններ, հասարակական մարմիններ կամ անհատներն են շինել։ Այդ տեղերուում ամեն մի գիշերուաց համար անհողին արժէ 4—5 պենի։ Ըստ հանրապէս այդ աեղերում՝ ամեն մի սկզբանում 2—4 անկողին է լինում, շտա անգամ էլ

մի հասաւ, որի համապատասխան էլ սրոշում է գիշերուայ վճարը: Այսն և այնպիսի ծիմնարկութիւններ, որտեղ անկողինը արժէ երեք պենսի արկղները շարուած են միմեանց կողքին հակայական դաշլիճներում, յանախ երեք կամ չորս շարքեր իրար եռեկց: Այդ տեղ շարքով պառկում են ամենից աղքատ մարդիկը: և այս միակ տեղն է, ուր նոքա կրաքոլ են հանդիսա գտնել: 1904 թուին Փրկութեան բանակի տուած վիճակագրութեան համաձայն, ամբողջ Անգլիայում երկու սեռի 1,447,893 հզի ապառան են գտնել: 1901 թուին ամբողջ աշխարհում 4,398,854 հզի են ընդունուել այդպիսի հաստատութիւնների մէջ:

Այդ շինութիւնների մէջ ընականաբար հզի է ապառուած և՝ բաղնինների և՝ լուացարանների վրայ: Լուացարանների մուտքը ձրի է, լուացքի մեծ տաշտելը տաք և ոտոն ջրի ծուրակներով և երկար շարքերով զառաւորուած են իրար կողքի, առանձնապէս ուղեր մաքրելու վաննաներ: Բաղնիններում մի անդամ տաք ջրով լողանալը արժէ մի պենս: ուրիշ բաժանմունքներ էլ կան, ուր շորերն ու լաթերն են մաքրում ու լուանում: Կան և ախտահան թոնիներ, որոնց մէջ շրմ են թափ տալիս՝ ոջիլներից մաքրելու համար: Այս հաստատութիւնների վրայ հսկող ուղանները պատճում են, որ այդ տեսակ մաքրութիւնը շատ սակաւ գէպքում է իրենց սահպմաժը կատարուում, որովհետեւ, երբ մի հիւրի անմաքրութիւնը կամ ոջիլները հարեանին անդուրեկան են, հենց նրանց սահպում են ուշք գարձնել մաքրութեան վրայ: Ապա թէ ոչ Փրկութեան բանակի բազմաթիւ հոկայ զինուորները հզի են տանում այդ մասին և իրենց գիտողութեամբ հոկաւմ են ներքին կարգ ու կանոնի վրայ, որ թէ և շատ շեն, բայց եղածները խիստ կերպով են կատարուում:

Անկողնի սարքն է. մի երկաթեայ մահճակալ, զուգոնակով ներքնակ, ձիու մազեց լցրած բարձ, որ ընդհանրապէս անդիւայում ուղիղական է: Նորեքը համար կան առանձին արկղ-պաշհաններ, որոնց բանալինները, եթէ հիւրը երկար ժամանակ է մնում, իւր մօսն է պահում: Այցի ննջարաններից կան և բնակելու սենեակներ ու ճաշարաններ: Այդ տեղերում լինում է հաստարակաց աղօթք, սակայն մասնակցութիւնը սոտիպողական չէ:

Փրկութեան բանակը առանձին նշանակութիւն է տալիս կանանց մէջ սկսած ընկերական դործունէութեան: Այդպիսի առանձին հաստատութիւններից գլխաւորը գտնուում է կոնգոնի

հիւսիս-արևելեան կողմը Հաքնեյում՝ հանանց համար, որ ունի 46 մեծ ապատարան և ուրիշ ընկերական հասատառթիւններ, որոնք կառավարուում են մոտ 500 սպաներով և պաշտօնեանեւրով. գլխաւոր խումբը կամ շտաբը կադմուած է 30 սպաներից: 1904 թուին 2165 կին են ընդունուել Փրկութեան աներում. այդպիսի աների թիւը Մեծ Բրիտանիայում 25 է, իսկ ամբողջ աշխարհում 116:

Լոնդոնում ծննդկանների ըազմաթիւ հաստատութիւններ կան, որ տեղից ուսեալ մանկաբարձուհիներ են գուրս գալիս և աներն են գնում օգնութիւն հացնելու համար: Նոցա գործունքութեան տապարէցը քաղաքի ամենից աղքատ և խուար մասերն են կազմում: Մի առանձին հիմնարկութեան մէջ էլ կանայք առանձնապէս ընկերական աշխատանքի համար են պատրաստուում: Տարուայ մէջ երկու անդամ յիսուն-յիսուն հոգի այնպիսի կանանցից, որոնք այդ գործի համար առանձին ընդունակութիւն են ցոյց տալիս՝ ընդունուում են այդպիսի հիմնարկութիւնների մէջ և ուսումն աւարտելուց յետոյ՝ ուղարկուում են զանազան քաղաքներ իբրև ոպաներ անտունների, արքեցողների հաստատութիւնների և փրկութեան աների մէջ ժառայելու: Առանձնապէս ուշագրութիւն են զարձնում անառակ կանանց վրայ և աշխատում են նըանց իրենց ընթացքից յետ կացնել: Զինուոր կանանց աեսակցութիւնները ընկած կանանց հետ տարեկան հաղարից անցնում է: Իսկ այդ բանի հետևանքը շատ անդամ ապշեցնող է: Առանձնապէս մեծ է նրանց գործը բանաարգելութիւնից և պատժից ազատուած կանանց համար, այդպիսիներին մասամբ բանտի գոներից են աւաջնորդուում, մասամբ էլ Փրկութեան բանակի լոնդոններով՝ վարչութիւնները ազատ են թողնում: Բանտերի վերակացուները թոյլ են տալիս Փրկութեան բանակի պաշտօնեա ներին բանդարիուածներին այցելել: Փրկութեան բանակին՝ նրա կրօնական առանձնայատեսութիւնների համար՝ նոյն իսկ թշնամաբար վերաբերուաղ, բայց գործին աեղեակ անձնաւորութիւններ, խոստովանում են, ու Փրկութեան բանակը իւր զատափարակութեամբ ազատուած բանաարկեալների համար հիմնած հաստատութիւնների մէջ՝ բարոյական շատ զգալի հետեանքների է հասել: 1904 թուին 700-ի շափ բանտից աքձակուած յանցաւորներ ընդունուել են այդ հաստատութիւնների մէջ. զոցանից 400 հոգի Փրկութեան բանակի միջնորդութեամբ իրենց համար պաշտօն են զաել կամ վատահելի բարեկամների յանձնուել: 1904 թուին 200-ի շափ աղջիկներ փրկութեան աներից զէպե

քաղաքացիական կեանքն են առաջնորդուել և Փրկութեան բանակը շնորհիւ, առանձնապէս իրքեւ աղախիններ՝ վստահելի ընտանիքներում տեղաբռուելու:

Մեծ գործ է կատարում Փրկութեան բանակը ընտանիքներին արած այցելութեամբ: Փրկութեան բանակը ծանրակշիռ նշանակութիւն է տալիս ընտանիքների վրայ գործ գրած աղուցութեան: 1904 թուին 130,000 շափ ընտանիքներ են այցելած քաղաքի աղքատ մասերում: բացի այդ այցելել են 8,000 հիւանդների և խնամել: 72,000 ոդելից ըմպելիների խանութեներ են մտել՝ մարդկանց իրենց ամենամեծ թշնամուց, ոդելից ըմպելիքց՝ հեռու պահելու համար. 2600 այցելութիւններ են արել բանուարների հասարակաց ընակարաններում, և 676 ժողովներ են գումարել այդ տեղերում քարոզչութեան համար: Այս թուերը բաւարար կերպով՝ բարձրածայն վկայում են նորագործունէութեան ծաւալի մասին:

Փրկութեան բանակը այլ և այլ եղանակներով անխնամերեխաներին իւր հովանու տակն է առնում: Երեխաների համար մի առանձին ապահուանարան ունի, ուր ամեն կիւրակի ծրինախաճաշ է բաժանում կամ երբեմն էլ շատ շնչին գնով վաճառում—երկու ֆարթինգով (մօտ 1 կոպ.): Ժողի կամ ցամաքի վրայ զբուանքներ է ձեռնարկում երեխաների համար, որպէս զենոքա գոնէ մի անգամ ուրիշ օդ շնչեն, քան իրենց ցած և նեղ սենեակների, վորթիկ բակերի կամ քաղաքամասի գարշահոտ փողոցների օդն է:

Նատ լաւ յայտնի է, որ Փրկութեան բանակը մեծ չափերով մուտք է գործում մեծ քաղաքների կեանքի ամենից թագուն խորըերը: Երբեմ ապացոյց կարող է լինել այն գէպը, որ 1904 թուին մի կորսուածի գտնելու համար 2200 դիմումներ և խնդիրներ ուղղուեցան Փրկութեան բանակին: Դժուար է երկակայել, թէ Լոնդոնում ուստիկանութեանը տարեկան քանի հաղար կորսուած մարդկանց համար ծանուցում է տրուում: «Կորսուածները ըոլորը ընական է մեռած չեն լինում: Նատերը որեկցէ պատճառով իրենց անուններն են փոխում, շատերը ուրիշ քաղաք են գնում գաղտնի կերպով շտաբերը գաղութներ կամ օտար երկիրներ են վրախչում առանց յայտնելու իրենց ծանօթներին կամ բարեկամներին: Անշուշտ Փրկութեան բանակը, որ զիշեր ցերեկ անգլոսաքսոնական աղջի ամենաստորին խաւերն է մտնում և որի կապերը ամբողջ երկրի վրայ տարածուած են, ամենայարմարն է՝ այդպիսի կորածներին գանելու և նոցա իրենց ազգականներին ետ գարձնելու համար. 1904 թուին մօտ 450 կորածներ գտնուեցան:

Բոերների կառւելց յետով՝ գործազուրկների թիւը աճում է հաշվարներով և ձմեռները առանձնապես պետութեան, քաղաքների և անհատների պարտականութիւնն է այս բաղմութիւնը սովորմանցից ազատել: Ով մի անդամ այս աշխատանքից զուրկ բազմութեան ցոյցերին՝ Վեստենդ ում և Հայդեմպարկում ներկայ է եղել, կհասկանայ այս խնդրի մեծութիւնը: Դեռ ևս բոլորի յեշողութեան մէջն է այն աղմկարից տեսութանը, որ գործազուրկները առաջացրին Կոնդոսի ու Պօղոս մայր եկեղեցու մէջ և նորա շուրջը:

Փրկութեան բանակը աշխատանք գտնելու միջնորդ գրասենեակներ է հաստատել. 1904 թուին 12,765 հոգաւց ոչ պակաս աշխատանք փնտրող մարդիկ են ցուցակագրուած և 15,531 մարդու համար տեական կամ ժամանակաւոր աշխատանք գտնուած: Գործազուրկները աշխատանք են ստանում նաև Փրկութեան բանակի սեպհական գործարաններում և ֆարբեկաներում: Այդաեղ աշխատում են խմողների, չտրագործների և բանտից ազատուածների համար հիմնուած հաստատութիւններում պատսպարուածները, որոնք հսկողութեան կարիք ունեն կամ նոցու համար ուրիշ գործարանները մանել անհնարին է կամ կորուարեր: Այդ տեղ սովորեցնում են զանազան տեսակի արհեստներ, սակայն գլխաւոր նպատակն է աշխատելուց ձանձրացած կամ անսովոր մարդկանց աշխատանքի վարժեցնել և այդպիսով դարձեալ հասարակութեան պիտանի անդամներ գալձնել:

1902 թուին Փրկութեան բանակը այդպիսի 64 մեծ դորժարան ուներ, կրանկարասիք, թուղթ, տոպրակներ, ոտ մաքրելու խմբներ, դորգեր, խոզանակներ, անկողին, հաղուստներ, կոշիկներ և կոռաքեր պատրաստող գործարաններ ու արհեստանոցներ, փուռեր, թուղթ պատրաստող և ցնցուիներ ջոկջոկ հիմնարկութիւններ, ջրաղացներ. այդ տեղերում 5,000 շամբ մասդիկ էին աշխատում: Պատրաստում են այն տեսակ իրեր, որ Փրկութեան բանակն է գործածում. օրինակ թուղթ՝ անհամար թռուցիկների համար, որոնցով ամբողջ աշխարհն են ողջում, այնպէս որ տաքեկան ոչ պակաս քան 6000 տոն նոր թուղթ է պատրաստուում այդ գործարաններում հնացած թղթերից: Եանուսըները մեծ մասամբ անուս մարդիկ են, ծերութիւնից, քաղցեց, աղքատութիւնից և ողելից խմիչքներից թռւացած, այնպէս որ գոքա ուրիշ աշխատանքների համար ընդհանրապէս անպէտք են: Փրկութեան բանակի այս բանուուորները մեծ մասամբ ուտում և ուղբում են նոյն շիւնների

մէջ, սատացած վարձը գրեթէ նոյնքան է, ինչքան ուրիշ գողծութաններում, սակայն վճարը կանխիկ փողով չեն սատանում, այլ արժեթղթեր, որով գիշերելու տեղի և ուտելու վճարն են զուրս դալիս, իսկ մասնագր տակոսով պահում են հարկաւոր ժամանակ տիրածը յանձնելու համար և կանայք աշխատում են առեղնադորձի և ուտայնաներում, կադմարաններում, լուսացարաններում և ճերմակեղեններու պատրաստելու մներում: Մեծ հոգու տարութեմ անային ծառաներ պատրաստելու համար, որովհետեւ մի կողմից Անդրիայում այգապիսիների կարեքը շատ է զգացւում, միւս կողմից էլ այդպիսով յայս ունեն այն տէլերի հաճութիւնը զբաւել զէոլի Փրկութեան բանակը, որոնց մներում իրենց պատրաստածներն են ծառայում:

Անդրիայում հրատապ մի խնդիր է, թէ ի՞նչպէս պէտք է անել, որ երկիրը թափառաշրջիկներից ազատ լինի, որոնք հաստարակութեան համար ոնպէսոք են կամ վնասակար: Ահա այսպիսիների մէջ Փրկութեան բանակը աշխատում է տարածել իւր բարյական աղդեցութիւնը: Վիճակուդրութեան համաձայն Մեծ Բրիտանիայում 60,000-ից ոչ պակաս թափառաշրջիկներ կան: Աչ միայն նրանց օգտի, այլ գլխաւորապէս այն չափազանց վնասակար աղդեցութեան պատճառով, որ իրենց օրինակով անում են իրենց անցած տեղերի մատաղ սերնդի վրայ, բոլորինին չհաշուելով նրանց հասցած զաւա վնասը, աշխատանք են դուծ դնում թէ հասարակական և թէ մասնաւ որ ընկերութիւնները այդ չափաց վերացնելու: Այս գուծի մէջ ևս խառնուեց եռանդով Փրկութեան բանակը. կսուեցաւմ, Թայմզի ափի վրայ մի բանուորական գաղթավայր հիմնելով՝ Հաղլայքի գաղութը ըռնուեմ է 3000 ակր (Acres) տարածութիւն: մօտ 100 ակրի վրայ պտղատու ծառեր են տնկուած, մշակում են կանաչեղէն և ուրիշ ծախու բոյսեր ևս: Առանձին ուշադրութեան արժանի է այդ տեղի հաւաքուծութիւնը: Նիւթապէս ամենամեծ շահը աղիւսագործութիւն է տալիս: 1904 թուին գաղութի մուտքը եղել է 660,000 մարկ: Սակայն պէտք է նկատենք, որ գիւղատնտեսութիւնը, չնայած, որ ամենախելօք կերպով է կատարուում, չե կարող դադութի ծախսերը հանել: պակասը ծածկուում է գլխաւորապէս արուեստագործական ձեռնարկութիւններով:

Եւ այսպէս Փրկութեան բանակը անդրիական աղդի ամենից աւելի կեղտի և թշուառաւթեան մէջ խրուած տարրերին

ձեռք է մեկնում և աղքատութեան յետին ծայրը ընկածներին օգնութեան հասնում: Չափազանցութիւն չի լինի, եթէ պնդենք, որ Փրկութեան բանակն է միայն, որը մեծ չափով անգլիական մեծ քաղաքների խորքերն է թափանցում, և նոցա բարոյական ու տնտեսական պահանջներին փոքր ի շատէ բաւարարութիւն տալիս:

Անուշագրութեան չպէտք է մատնել և այն ինքն ըստ ինքեան հասկանալի բանը, որ Փրկութեան բանակի անտեսական օգնութիւնը միշտ էլ միայն միջոց է նպատակի համար,— այսինքն հոգու փրկութեան համար: Սակայն այս բանը չի կարող ոչ մի կերպ նրա նշանակութիւնը նուևաստացնել, որովհետեւ այն բոլոր աշխատութիւնները, որ հասարակական և անհատական ընկերութիւնները թափում են այդ բազմութեան համար տնտեսական հոգի վրայ, դարձեալ նոցա հոգեոր քաղաքակրթական մակերեսոյթը բարձրացնելու համար է:

Անգլիական աղքատախնամ և բանդային վարչութիւնները Փրկութեան բանակի արժեքը ճանաչել են, քաջալերում են նրան և թողնում են, որ իրենց վրայ զրուած բարոյական պարտականութեան մի աշքի ընկնող մասը նոքա կատարեն:

Փրկութեան բանակը հիմնուած է կրօնական սկզբունքների վրայ, նորա կրօնական ըմբռնումներն ու արտայայտութիւնների ձևերը շատերի համար կարող է անդուրեկան լինել, բայց չպէտք է մոռանանք և այն, որ ամբոխի համար անշուշտ կրօնի այդ տեսակ ըմբռնումը աւելի լաւ է, քան կոպիտ նիւթապաշտութիւնը, կամ այն մեռած անհաւատութիւնը, որ քառողուում է կիսակիրթ, պատմական մտածողութիւնից զուրկ աղիտատորների բերանով:

Մեծ քաղաքներում արդիւնագործական տշխատաւորներին պատկանող ստորին շերտը պաշտօնական եկեղեցուց պաղած է և հեռացած: Փրկութեան բանակը մասամբ գոնէ լրացնում է այդ պակասը, որ կրօնի բերած բարիքներից իսպառ չկուտին:

Դր. իրաւար. և բնագիտ. P. F. Walli. Beilage der Allg. Zeit. տեսք. 14—15. 1907:

**Աղատ թարգմ. դերմ. Ա. Գալստեան.**